ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզ, Փամբակ խոշորացված համայնք, Վահագնաձորի բնակավայր

Ամսաթիվ. 2025 թվականի հոկտեմբերի 15, ժամը 12:00

Համաձայն ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն) և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի պահանջների՝ ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Վահագնաձոր բնակավայրի վարչական շենքում կայացավ **«ԷՎԵԼ ՊԻՍ» ՍՊԸ**-ի կողմից նախատեսվող փոքր հիդրոէլեկտրակայանի (ՓՀԷԿ) նախագծի **Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության առաջին հանրային քննարկումը**:

ԵԼՈՒՅԹՈՎ ՀԱՆԴԵՍ ԵԿԱՎ

1. **Է. Եղոյան**, Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Վահագնաձորի բնակավայրի վարչական ղեկավար — բացման խոսքով ողջունեց քննարկման մասնակիցներին և կարևորեց համայնքային մասնակցության դերը նման ծրագրերի իրականացման գործընթացում:
2. **Տ. Նավասարդյան**, «Գագիկ Գևորգյան» ԱՁ ներկայացուցիչ — ներկայացրեց նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացը, կիրառվող մեթոդաբանությունը, շրջակա միջավայրի ելակետային տվյալները, ինչպես նաև տեխնոլոգիական մասի բնապահպանական կողմերը:
3. **Ա. Գրիգորյան**, նախագծային և մեթոդական ղեկավար կազմակերպության տնօրեն — ներկայացրեց նախագծի տեխնիկական ցուցանիշները, ինչպես նաև ընկերության կողմից նախատեսվող շրջակա միջավայրի կառավարման միջոցառումները, շինարարական և շահագործման փուլերի հնարավոր ռիսկերը: Բացի այդ, անդրադարձ կատարվեց կիրառվող անաղմուկ տեխնոլոգիաներին և դրանց բնապահպանական առավելություններին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- **Հարց.** Համայնքի ներկայացուցիչը հետաքրքրվեց՝ արդյոք նախատեսվող գործունեությունը կարող է ազդեցություն ունենալ ջրի որակի վրա:

Պատասխան. Նշվեց, որ գործունեությունը կիրականացվի ընկերության կառավարման և/կամ սեփականության իրավունքի ներքո գտնվող տարածքներում, և աշխատանքների կազմակերպման բոլոր փուլերում (շինարարական և շահագործման) բացառվելու է որևէ անկառավարելի ազդեցություն շրջակա միջավայրի վրա:

- **Հարց.** Համայնքի ներկայացուցիչը հարց բարձրացրեց առկա ջրերի քանակի և դրանց հնարավոր նվազման վերաբերյալ:

Պատասխան. Ներկայացվեց, որ ընկերությունը արդեն ունի գործող ջրօգտագործման թույժ (ՋԹ), որը տրամադրվել է լիազոր մարմնի կողմից՝ ուսումնասիրելով տարածքում առկա ազատ ջրաքանակը և անհրաժեշտ ջրառի ծավալները: Ընդգծվեց, որ օրենքի պահանջով նախագծով նախատեսված է ջրաչափերի (օնլայն հսկման) տեղադրում թե՛ ջրառի, թե՛ մնացորդային հոսքերի վրա, ինչը թույլ կտա խախտումներ բացառել:

- **Հարց.** Հնչեց հարց՝ արդյոք նախատեսվող գործունեությունը կարող է ազդել հոսանքն ի վար գտնվող ձկնաբուծարանների վրա:

Պատասխան. Նշվեց, որ շինարարական աշխատանքների ընթացքում գետի ջրի որակական և քանակական բնութագրիչների փոփոխություն չի նախատեսվում, և նման ազդեցություն չի լինի նաև շահագործման փուլում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Վարչական ղեկավար Է. Եղոյանը** իր ելույթում ընդգծեց, որ տարածաշրջանը գտնվում է սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակում, և ցանկացած նոր աշխատատեղ կարևոր է համայնքի համար: Միևնույն ժամանակ նա կարևորեց, որ գործունեությունը իրականացվի օրենքով սահմանված կարգով և առանց էական բնապահպանական ազդեցության:

Վահագնաձոր բնակավայրի վարչական ղեկավար՝ Է. Եղոյան _____

<<ԷՎԵԼ ՊԻՍ>> ՍՊ ընկերության տնօրեն՝ Ա. Ալեքսանյան

_____